ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/132

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Աբովյանի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Աբովյանի համայնքապետարանի ներկայացուցիչ՝ Հ. Մկրտչյանի,
«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Պետրոսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով գնանշման հարցում, անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 30.12.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. պարտավորեցնել կասեցնել «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով գնման գործընթացը, պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ,

2. արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը, պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 30.12.2020թ.-ին:

30.12.2020թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/132 համարի ծածկագիրը:

19.01.2021թ.-ին, և 29.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 19.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.01.2021թ.-ին:

2. «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 30.12.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1.1 Աբովյանի համայնքապետարանի կողմից ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման «1»՝ Անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռք բերման մրցույթի բանակցությունների անցկացման ընթացքում նախնական տվյալներով հաղթող է ճանաչվել «Քինգ Մարշալ» ՍՊ ընկերությունը 12 ամսվա դիմաց 3.750.000 ՀՀ դրամ գումարի վերջնական առաջարկ ներկայացնելու արդյունքով ու այս տեղեկությունները ստացվել են Աբովյանի համայնքապետարանում պահպանություն իրականացնող պահնորդներից, սակայն առ այսօր անվտանգության և պահնորդական

ծառայություններ ձեռքբերման «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին gnumner.am կայքում հրապարակում չի կատարվել:

1.2. Աբովյանի համայնքապետարանը իր կարիքների համար անվտանգության և պահնորդական ծառայություններ ձեռքբերման «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին gnumner.am հրապարակում չի կատարվեր ուստի և սահմանված ժամկետում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված պահանջը պահպանված չէ, որը:

1.3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ի համաձայն՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները. հնարավորություն չի տրվել բողոք ներկայացնելու գնումների բողոքներ քննող անձին պայմանագիրը կնքելու մասին որոշման դեմ մրցույթում հաղթող կազմակերպության կողմից խտրական և աննախադեպ ցածր գին առաջարկելու վերաբերյալ:

1.4. «Քինգ Մարշալ» ՍՊ ընկերության կողմից 12 ամսվա համար, 3.750.000 ՀՀ դրամ գումարի չափով Աբովյանի համայնքապետարանի «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով (գնման ընթացակարգի վերջնական առաջարկ ներկայացնելու արդյունքում մրցույթում կրկին անգամ խարական և աննախադեպ ցածր գին առաջարկել, և նման խտրական և աննախադեպ ցածր գին առաջարկելու վերաբերյալ առկա է գնումների բողոքարկման խորհրդում քննվող ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյանի կողմից վարույթ ընդունված թիվ ԳԲՔԱ-Լ0-2020/130 ծածկագրով «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերրալ:

1.5. «Քինգ Մարշալ» ՍՊ ընկերության կողմից առաջարկված 12 ամսվա համար, 3.750.000 ՀՀ դրամ գումարը տեխնիկական բնութագրի պահանջներին 3.750.000 : 12 ամիս : 1 պահակետ = 312500 դրամ, ուստի և խտրական և աննախադեպ ցածր գին է հետևյալ հիմնավորումներով, մասնավորապես.

Պահնորդական ծառայությունները կարգավորվում են «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ Օրենքով և Օրենքի 5-րդ հողվածով սահմանված է Թիկնապահական և պահնորդական գործունեության սկզբունքները՝

1. Թիկնապահական և պահնորդական գործունեությունն իրականացվում է օրինականության, օրենքի առջև բոլորի հավասարության, մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու արժանապատվությանը, ֆիզիկական և

իրավաբանական անձանց իրավունքները և օրինական շահերը հարգելու, պաշտպանվող ֆիզիկական անձի ու պահպանվող օբյեկտի պաշտպանությունը հուսալի և անվտանգ եղանակով իրականացնելու սկզբունքների հիման վրա:

Նույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված է Թիկնապահի և պահնորդի իրավական կարգավիճակը՝

1. Թիկնապահը և պահնորդն աշխատում են աշխատանքային պայմանագրի հիման վրա, և նրանց վրա տարածվում են աշխատանքային օրենսդրության պահանջները:

2. Թիկնապահի և պահնորդի աշխատանքին հավակնող անձը աշխատանքային պայմանագիր կնքելիս աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի հետ մեկտեղ պարտավոր է ներկայացնել իր կողմից հատուկ պատրաստություն (որակավորում) անցնելը հավաստող փաստաթուղթ:

3. Թիկնապահի և պահնորդի կարգավիճակ ձեռքբերելու և թիկնապահական և պահնորդական գործառույթներ իրականացնելու (այդ թվում՝ զենքի օգտագործմաը և հատուկ միջոցների գործադրմամբ) իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն թիկնապահի կամ պահնորդի որակավորում:

4. Թիկնապահի և պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու և թիկնապահական և պահնորդական գործառույթ իրականացնելու իրավունք չունեն այն անձինք, ովքեր՝

- դատական կարգով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

- հոգեկան հիվանդության, հարբեցողության կամ թմրամոլության պատճառով հաշվառման են կանգնած բուժհիմնարկներում.

- դատապարտվել են դիտավորյալ հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ.

- խուսափել են ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:

Նույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված է՝ Պահնորդի (թիկնապահի) համազգեստը, վկայականը, զենքը, հատուկ և տեխնիկական միջոցները

1. Պահնորդական կազմակերպությունը պարտավոր է պահնորդին (թիկնապահին) տրամադրել հատուկ համազգեստ, անձը հաստատող վկայական, զենք, հատուկ և տեխնիկական միջոցներ:

2. Հատուկ համազգեստը տեսանելի կերպով պարունակելու և/կամ նրան փակցվելու է պահնորդի (թիկնապահի) անունը, ազգանունը և պահնորդական կազմակերպության ապրանքային նշանը, ֆիրմային անվանամը:

3. Պահնորդն իրավունք չունի համազգեստ կրելու՝ չլինելով պարտականությունների կատարման մեջ, բացառությամբ մասնավոր պահնորդական կազմակերպության շենքում կամ դրա հարակից տարածքում գտնվելու դեպքերի: Իր պարտականությունները կատարելիս պահնորդը պարտավոր է կրել համազգեստ: Այս պարտականությունից ազատվում են միայն թիկնապահները սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ծառայության մատուցումն ապահովող պարտականությունները կատարելիս:

4. Իրենց պարտականությունները կատարելիս պահնորդները (թիկնապահները) կարող են օգտագործել միայն պահնորդական կազմակերպության սեփականությունը համարվող կամ օրինական տիրապետման տակ գտնվող զենքը, հատուկ և տեխնիկական միջոցները: Տրանսպորտային միջոցի վրա տեսանելի կերպով պետք է պատկերված լինեն կազմակերպության անվանումը, ապրանքային նշանը, կազմակերպության հեռախոսա-համարները:

Կատարողը, անվտանգության և պահնորդական ծառայությունների պայմանագրի շրջանակներում պարտավոր է պահնորդին տրամադրել հատուկ համազգեստ, անձը հաստատող վկայական նշված պահնորդի անունը, տեխնիկական միջոցները և համազգեստը, ինչի վրա տեսանելի կերպով պետք է պարունակի պահնորդական կազմակերպության ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, որոնք համարվում են անհրաժեշտ ծախսեր: Այսինքն յուրաքանչյուր պահնորդին, կատարողը պարտավոր է տրամադրել հատուկ համազգեստ տարբեր եղանակների համար գարուն/աշուն, ամառ, ձմեռ, կազմակերպության ապրանքային նշանը շեվրո, լինելով փակցված, որի շուկայական գինը մեկ պահնորդի համար կազմում է 350000-40000 ՀՀ դրամ, չհաշված պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի ապահովման համար գրացամատյանները, գրենական պիտույքները և կապի միջոցների այլ ծախսերը:

Ուստի նման պահանջները պարտադիր են Պատվիրատուի տարածքներում Անվտանգության և պահնորդական ծառայությունների մատուցման ժամանակ և տեխնիկական բնութագրով պահանջվող պահնորդների քանակի աշխատավարձերի ընդհանուր հաշվարկը, ինչպես նաև պահանջված ծախսերի հաշվարկը, չհաշված նաև այն, որ տվյալ գումարի մեջ արդեն իսկ բացակայում է, շահույթը և ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված շահութահարկը, ինչը խախտում է ՀՀ Գնումների մասին օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանված «Պայմանագրի գնի հաշվարկը՝

1. Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝

հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:» պահանջները:

Վերը նշված փաստերի և կատարվածից ելնելով Աբովյանի համայնքապետարանի կողմից, իր կարիքների համար անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին gnumner.am հրապարակում չի կատարվել սահմանված ժամկետում Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված պահանջը պահպանված չլինելու պատճառով էլեկտրոնային գրություն է ուղարկվել պատվիրատուին, որում նշված է, որ համաձայն նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները,, ուստի և պայմանագիր կնքելու մասին որոշման դեմ գնումների բողոքներ քննողող անձին մրցույթում հաղթող կազմակերպության կողմից խտրական և աննախադեպ ցածր գին առաջարկելու փաստով, զրկելով գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու մասին որոշման դեմ անգործության ժամկետում սահմանված բողոք ներկայացնելու հնարավորությունից:

Բողոքի փաստական և իրավական հիմնավորումները.

Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1. գնման գործընթացի միասնական կանոններով միցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2. պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3. ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի Գնման առարկայի բնութագրերը՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1. պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2. չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3. պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4. ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և ՀՀ գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի

կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի Պայմանագրի գնի հաշվարկը՝

1. Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահարկը:

2. Պայմանագրի գինը՝

1. կարող է լինել գործոնային, երբ պայմանագրի գինը փոփոխվում է պայմանագրով նախատեսված պայմանների (գործոնների) փոփոխության ազդեցությամբ: Հակառակ դեպքում պայմանագրի գինը կայուն է, և կողմերը պարտավոր են պայմանագրային պարտավորությունները ողջ ծավալով կատարել պայմանագրի գնի շրջանակում.

2. պետական գաղտնիք պարունակող՝ ռազմական կարիքների բավարարման նպատակով արտադրանքի նոր տեսակների հեռանկարային մշակման, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների ձեռքբերման դեպքում կարող է լինել փաստացի ծախսերով հաշվարկված, պայմանով, որ այն չպետք է գերազանցի տվյալ ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը ձեռք բերելու համար նախատեսված ֆինանսական հատկացման չափը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի Գնումների ընթացակարգի կասեցումը՝

1. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հողվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը:

2. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն մասով նախատեսված որոշումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հողվածի համաձայն օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե

օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գնման առարկայի հատկանիշները բավարար ճշտությամբ սահմանված չեն որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, հնարավորության չի տալիս մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան: Ուստի «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին gnumner.am հրապարակում չի կատարվել սահմանված ժամկետում Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված պահանջը պահպանված չլինելու պատճառով նաև նման խախտմամբ կնքվելիք պայմանագրից զերծ մնալը 46-րդ հոդվածի 1-ին կետի Յուրաքանչյուր անձին տրված իրավունքն է:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը, պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը:

3. <u>Աբովյանի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 30.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/19916-2020 գրությամբ դիմել է Աբովյանի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 30.12.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստերին, 12.01.2021թ.-ին գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ Աբովյանի համայնքապետարանի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 2-ին հայտարարվել է «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման առարկա է հանդիսացել Աբովյանի համայնքապետարանի կարիքների համար անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերումը:

Մրցույթը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

«ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի հետ կապված պարզաբանումներ չեն պահանջվել, հրավերում փոփոխություններ չեն կատարվել: Հայտերի բացման նիստը կայացել է 2020 թվականի դեկտեմբերի 9-ին: Գնանշման հարցմանն ունեցել ենք չորս մասնակից: 2020 թվականի դեկտեմբերի 14-ին կայացել է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ, որի ընթացքում հաղթող մասնակից է ճանաչվել «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն և նույն օրը կազմված արձանագրության մեջ հայտարարվել է անգործության ժամկետ սահմանելու մասին որոշումը: Դեկտեմբերի 15-ին կազմվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և սահմանվել է անգործության ժամկետ 5 օրացուցային օր տևողությամբ, սակայն հայտարարությունը հրապարակվել է ավելի ուշ:

«ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցների հայտերը համապատասխանել են հրավերով սահմանված պահանջներին, իսկ հաղթող մասնակից ընտրելու համար հիմք է ընդունվել նվազագույն գնային առաջարկը: «Գնումների մասին» ՀՀ օրենքով և գնումների գործընթացը կարգավորող որևէ իրավական ակտով գնային առաջարկների համար չկա սահմանված նվազագույն շեմ:

«Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի առաջարկած վերջնական գինը սակայն չի կարելի համարել աննախադեպ ցածր գին՝ մասնավորապես, գնային առաջարկը կազմել է նախահաշվային գնի 75%-ը:

Հայտնում ենք մեր դիրքորոշումն այն մասին, որ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի առաջարկած գինը աննախադեպ ցածր չէ և «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է: Գնանշման հարցմանը, ինչպես արդեն ներկայացվել է, ունեցել ենք ևս մասնակից, որոնք օրինաչափ են համարել հանձնաժողովի կայացրած որոշումներ ուստի ապավինում ենք Ձեր կողմից կայացվելիք որոշման անաչառ լինելուն:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/132 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Աբովյանի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով 02.12.2020թ.-ին հայտարարվել է «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 09.12.2020թ.-ին:

iii. Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան:

iv. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով անվտանգության և պահնորդական ծառայությունների համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«Վերահսկողության տակ գտնվող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 6140 քմ շենք և նկուղը, ինչպես նաև 2870քմ հողատարածքը: Անհրաժեշտ է իրականացնել շուրջօրյա պահնորդական ծառայություն՝ առանց հանգստյան և տոնական օրերի: Աշխատակիցները պետք է ունենան ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորում և ապահովված լինեն ծառայությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով (բացառությամբ ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության ծառայողների): Ծառայություն իրականացնող բոլոր պահնորդներին անհրաժեշտ է հանդերձավորել համապատասխան արտահագուստով (գարուն-ամառ, աշուն-ձմեռ): Օբյեկտում ցերեկային ժամերի ընթացքում/յուրաքանչյուր օր՝ ժամը 09:00-ից մինչև 18:00-ն/ անհրաժեշտ է իրականացնել հերթապահություն /ներառյալ տեսահսկման և հակահրդեհային ահազանգման համակարգերի միջոցով/, իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն, կանխել խոշոր նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը, արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն): Արգելել կողմնակի անձանց մուտքը, այցելուներին տրամադրել մեկանգամյա անցագրային թերթիկներ՝ ընդունողի բանավոր թույլտվությամբ, մուտքը թույլատրել աշխատակիցների և այցելուների համար կազմված անվանացուցակով, իրականացնել Պատվիրատուի կողմից սահմանված այլ անվտանգության և պահակային կանոններ, հետևել շենքի դիմահայաց ավտոկայանատեղիի սահմանված կարգի պահպանմանը, ամենօրյա շրջայց կատարել շենքի ներսում՝ աշխատանքի ավարտից հետո: Օբյեկտում գիշերային ժամերի /յուրաքանչյուր օր՝ ժամը 18:00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 09:00-ն/ ընթացքում անհրաժեշտ է՝ ապահովել անվտանգության աշխատակցի առկայությունը, արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ,

երկրաշարժ, ահաբեկչություն և այլն), ձեռնարկելով իրավիճակից բխող միջոցառումներ, ապահովել գիշերային հերթափոխի աշխատանքների և օպերատիվ իրավիճակի վերահսկումը/ներառյալ տեսահսկման և հակահրդեհային ահազանգման համակարգերի միջոցով/, իրականացնել Պատվիրատուի կողմից սահմանված այլ անվտանգության և պահակային կանոններ: Ծառայությունը պետք է իրականացվի քառօրյա ռեժիմով: Կատարողը պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով հասցվել է Պատվիրատուին: Ծառայությունը պետք է իրականացվի քառօրյա ռեժիմով: Այս բոլոր պայմանները պարտադիր են, ներառված են պայմանագրի գնի մեջ և իրականացվում են Կատարողի կողմից:»:

v. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել «Աբսոլյուտ Սեքյուրիթի» ՍՊ, «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊ, «Քինգ Մարշալ» ՍՊ, «Պահապան 1» ՍՊ ընկերությունները:

vi. Մասնակիցներն առաջարկել են հետևյալ գները.

Հ/Բ	Ծառայության անվանումը	Գնային առաջարկները (ՀՀ դրամ)							
		Մասնակցի անվանումը							
		«Աբսոլյուտ Սեքյուրիթի» ՍՊԸ		«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ		«Քինգ Մարշալ» ՍՊԸ		«Պահապան 1» ՍՊԸ	
		Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ՈՎ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ՈՎ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ՈՎ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ՈՎ
1	Անվտանգության և պահնորդական ծառայություններ	4 800 000	-	4 166 667	5 000 000	8 160 000	-	4 950 000	5 940 000

vii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.12.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որոշել է հայտերի բացման և գնահատման նիստը կասեցնել և մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների՝ 14.12.2020թ.-ին, ժամը 17:00-ին:

viii. Հանձնաժողովի 14.12.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ բանակցություններին մասնակցած «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն առաջարկել է 3 744 000 ՀՀ դրամ, իսկ «Պահապան 1» ՍՊԸ-ն՝ 4 524 000 ՀՀ դրամ:

ix. Նույն արձանագրության համաձայն «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված /հաղթող. մասնակից է ճանաչվել «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն՝ առաջարկելով պայմանագիրը կատարել 3 744 000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

x. 29.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

xi. Հայտարարությամբ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

xii. «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 30.12.2020թ.-ին ժամը 16:29-ին ներկայացվել է բողոք:

xiii. Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 30.12.2020թ.-ին ժամը 16:31-ին:

xiv. Բողոքներ քննող անձի կողմից նույն օրը՝ 30.12.2020թ.-ին, ժամը 21:19-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ (այսուհետ նաև՝ Հայտարարություն) բողոքը ընդունվել է վարույթ:

xv. Հայտարարությամբ՝ Բողոքներ քննող անձը տեղեկացրել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

xvi. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղար է հանդիսանում Հ. Մկրտչյանը (այսուհետ նաև՝ Քարտուղար), իսկ որպես քարտուղարի էլ. փոստի հասցե նշված է ՝ sergeyhakopbyan@mail.ru:

xvii. Բողոքներ քննող անձը 30.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/19916-2020 գրությամբ դիմել է Աբովյանի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 30.12.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

xviii. Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 12.01.2021թ.-ին հրապարակվել է «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարություն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 30.12.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ ... բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի (այսուհետ նաև՝ Հրաման) 9-րդ կետի համաձայն՝ բողոքը վարույթ ընդունելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում Անձը բողոքը և դրա վերաբերյալ հայտարարությունը, հրապարակում է տեղեկագրում:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պայմանագիր կնքելու մասին որոշումը: Նման պարագայում բողոքը ներկայացվում է օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում: Բողոքներ քննող անձը բողոքը ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին

հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, որի արդյունքում հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը գնման գործընթացը ինքնաբերաբար կասեցվում է:

Այսինքն՝ գնման գործընթացը կասեցվում է օրենքի ուժով, այն է՝ ներկայացված բողոքը վարույթ ընդունելու մասին նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից և շարունակում է ընթացակարգը կասեցված մնալ մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Աբովյանի համայնքապետարանի կողմից անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով 02.12.2020թ.-ին հայտարարվախ «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում 29.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 30.12.2020թ.-ին ժամը 16:29-ին ներկայացվել է բողոք: Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 30.12.2020թ.-ին ժամը 16:31-ին: Բողոքներ քննող անձի կողմից նույն օրը՝ 30.12.2020թ.-ին, ժամը 21:19-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ: Նույն հայտարարությամբ տեղեկացրել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Բողոքներ քննող անձը 30.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/19916-2020 գրությամբ դիմել է Աբովյանի համայնքապետարանին հնարավորություն տալով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 30.12.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 12.01.2021թ.-ին հրապարակվել է «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարություն:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը՝ օրենքի ուժով, կասեցվել է 30.12.2020թ.-ին, ժամը 21:19-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ, ինչի մասին Պատվիրատուն և գնահատող հանձնաժողովը տեղեկացվել են www.gnumner.am կայքում հրապարակված, ինչպես նաև Բողոքներ քննող անձի կողմից 30.12.2020թ.-ին ուղարկված թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/19916-2020 գրությամբ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ որևէ դրույթ առ այն, որ Բողոքներ քննող անձն Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակելուց բացի, պետք է այդ մասին ծանուցի նաև Պատվիրատուին և/կամ գնահատող հանձնաժողովին: Ավելին, Պատվիրատուն և/կամ գնահատող հանձնաժողովը, ինչպես նաև հանձնաժողովի քարտուղարը պարտավոր են մինչև հայտերի բացման վերջնաժամկետը լրանալը հետևել պաշտոնական տեղեկագրի՝ www.gnumner.am կայքի բողոքարկման բաժնի ներկայացված բողոքների վերաբերյալ հայտարարություններ ենթաբաժնում առկա հրապարակումներին, որից հետո նոր միայն իրավունք կունենան անցկացնել գնահատող հանձնաժողովի նիստ կամ կայացնել ցանկացած այլ որոշում:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքերից՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնման գործընթացը կասեցված լինելու պայմաններում պայմանագիր կնքելով և այդ մասին հայտարարություն հրապարակելով, գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, այն է՝ վերջինիս կողմից չի կասեցվել գնման գործընթացը, ինչի արդյունքում խախտվել է Օրենքի 51-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Անդրադառնալով բողոքաբերի կողմից ներկայացված բողոքի իրավական և փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-

րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Աբովյանի համայնքապետարանի կողմից անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով 02.12.2020թ.-ին հայտարարված «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Վերոնշյալ նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, համաձայն որոնց՝ գնային առաջարկը պետք է բաղկացած լինի արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ՝ ներկայացված

գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Աբովյանի համայնքապետարանի կողմից անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով 02.12.2020թ.-ին հայտարարված «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան, որին մասնակցելու նպատակով, հայտ ներկայացրած «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն 14.12.2020թ.-ին ժամը 17:00-ին տեղի ունեցած միաժամանակյա բանակցություններին արդյունքում ճանաչվել է «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21-01» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված և հաղթող մասնակից՝ առաջարկելով պայմանագիրը կատարել 3 744 000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով, որպես առաջարկվող ծառայության ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար առաջարկելով 3 744 000 ՀՀ դրամ գումար:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել

միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Բողոքաբերը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Սույն գործով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված ծառայության արժեքը՝ 3 744 000 ՀՀ դրամ գումարը պակաս է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերի ինքնարժեքից: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Բողոքաբերն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքներն անհիմն են, որպիսի պայմաններում ներկայացված բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 30.12.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/132 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**